

Կ Ա Ր Գ

ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) ընդհանուր ժողովի (այսուհետ՝ Ընդհանուր ժողով) կողմից Պալատի ներքին իրավական ակտերի ընդունման ընթացքում, ինչպես նաև Պալատի նախագահի, խորհրդի անդամների և գործը նախապատրաստող անձանց ընտրություններին (այսուհետ՝ Ընտրություններ) քվեարկությունների և արդյունքների ամփոփման գործընթացում դիտորդների ներգրավման, դիտորդների հավատարմագրման պայմանների, հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, դիտորդների վկայականների ձևերը և դրանց լրացման կարգը:

2. Դիտորդական առաքելության նպատակը Ընդհանուր ժողովի կողմից Պալատի ներքին իրավական ակտերի ընդունման և Ընտրությունների անցկացման գործընթացի վերաբերյալ հավաստի տեղեկությունների հավաքագրումն է:

3. Դիտորդական առաքելությունն իրականացվում է դիտորդների միջոցով՝ պահպանելով չեզոքության, անկողմնակալության և Ընդհանուր ժողովի կողմից Պալատի ներքին իրավական ակտերի ընդունման և Ընտրությունների անցկացման գործընթացներին չմիջամտելու սկզբունքները:

4. Դիտորդի գործունեության նյութական և ֆինանսական ապահովվածությունը կատարվում է դիտորդին ուղարկող կողմի կամ դիտորդի անձնական միջոցների հաշվին:

II. ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

5. Ընդհանուր ժողովի կողմից Պալատի ներքին իրավական ակտերի ընդունման և ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն. ա) միջազգային կազմակերպությունները; բ) ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական կամ հյուպատոսական կազմակերպությունների ներկայացուցիչները; գ) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կամ այլ ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին; դ) ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից հաստատված ցանկում նշված հասարակական կազմակերպությունները; ե) զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչները:

6. Սույն կարգի 5-րդ կետում նշված կազմակերպություններին և անձանց դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկելու իրավունք ունեն՝ Պալատի խորհուրդը, Պալատի նախագահը և/կամ Հաշվիչ հանձնաժողովի նախագահը:

7. Հրավերում նշվում է անցկացվող քվեարկությունների նպատակը, քվեարկության անցկացման վայրը և ժամը, ինչպես նաև համապատասխան դիտորդական կազմակերպության կողմից դիտորդներ նշանակելու համար

թեկնածուների առավելագույն թվաքանակի վերաբերյալ տեղեկատվություն: Հրավերին կից ներկայացվում է նաև քաղվածք՝ Պալատի կանոնադրությունից, դիտորդի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

8. Սույն կարգի 5-րդ կետին համապատասխանող կազմակերպությունն՝ իր նախաձեռնությամբ հավատարմագրվելու ցանկության դեպքում, հաշվիչ հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը. ա) դիմում՝ նշելով դիտորդական առաքելություն իրականացնող անձանց ցանկը, ոչ ավել քան 3 (երեք) ֆիզիկական անձից (դիտորդի անունը, հայրանունը, ազգանունը, դիտորդական կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնը); բ) ցանկում նշված ֆիզիկական անձ դիտորդների գրավոր համաձայնությունը ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության դիտորդներին վերաբերող կարգին և սույն կարգին ենթարկվելու վերաբերյալ; գ) հայտարարություն, որ չի սատարում որևէ թեկնածուի; դ) կազմակերպության կանոնադրության և պետական ռեգիստրի պատճենները:

9. Պալատի նախագահին և/կամ Պալատի խորհրդին հասցեագրված դիմումները փոխանցվում են Հաշվիչ հանձնաժողովին:

10. Որպես դիտորդ առաջադրված անձինք իրենց դիտորդական առաքելությունն իրականացնում են միայն Հաշվիչ հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո: Դիտորդը համարվում է հավատարմագրված դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպության կողմից նրան դիտորդի վկայական (այսուհետ՝ Վկայական) տրամադրելու պահից:

11. Հաշվիչ հանձնաժողովը վարում է հավատարմագրված դիտորդների ցանկ:

12. Հավատարմագրված դիտորդական կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է Պալատի համացանցային կայքում:

13. Հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները Հաշվիչ հանձնաժողովին են ներկայացվում ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ:

14. Հաշվիչ հանձնաժողովը դիտորդներին տրվող վկայականներն այդ կազմակերպություններին է հանձնում դիմումը ստանալուց ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում:

15. Հաշվիչ հանձնաժողովը մերժում է դիտորդների հավատարմագրման մասին դիմումը, եթե սույն կարգով նախատեսված կազմակերպության կանոնադրական խնդիրները կամ նրանց գործունեությունը չեն բավարարում սույն կարգի 5-րդ կետի պահանջներին կամ դիմող անձը չի համաձայնվել ենթարկվել սույն կարգի կամ Պալատի կանոնադրության դրույթներին:

16. Հաշվիչ հանձնաժողովը յուրաքանչյուր դիտորդին տալիս է դիտորդի վկայական, որի ձևը սահմանվում է Հաշվիչ հանձնաժողովի կողմից:

17. Վկայականի մեջ նշվում է քվեարկության տեսակը, քվեարկության ամսաթիվը, վկայականի հերթական համարը, դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության անվանումը, դիտորդի անունը և ազգանունը, վկայականի տրման ամսաթիվը, Հաշվիչ հանձնաժողովի նախագահի ստորագրությունը և կնիքը, նշում այն մասին, որ Վկայականը վավեր է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում, և նշում այն մասին, որ Վկայականն ուժի մեջ է մինչև արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ 8-րդ օրը:

18. Վկայականը լրացվում է հայերեն լեզվով: Միջազգային կազմակերպություններից դիտորդներին տրամադրվում են հայերեն և անգլերեն կամ հայերեն և ռուսերեն լեզուներով լրացված վկայականներ:

19. Վկայականը վավեր է դիտորդի կողմից անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

20. Դիտորդի կողմից որևէ թեկնածուի աջակցելու դեպքում կամ սույն կարգի պահանջները խախտելու դեպքում, Հաշվիչ հանձնաժողովն իրավունք ունի համապատասխան կազմակերպությանը կամ սուբյեկտին զրկելու դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքից:

21. Դիտորդների լիազորությունները դադարում են ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ ութերորդ օրը:

III. ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Դիտորդը քվեարկության օրը հետևում է Հաշվիչ հանձնաժողովի աշխատանքներին և կարող է Հաշվիչ հանձնաժողովի նախագահին ներկայացնել իր դիտարկումներն ու առաջարկությունները:

23. Դիտորդական առաքելություն իրականացնելիս Դիտորդն իրավունք ունի՝

- ներկա լինելու Հաշվիչ հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում:

- հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին:

- անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, Հաշվիչ հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, հաշվիչ հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ:

- ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար:

24. Դիտորդը իրավունք չունի միջամտելու Հաշվիչ հանձնաժողովի աշխատանքներին:

25. Դիտորդի՝ սույն կարգով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ Հաշվիչ հանձնաժողովը) իրավունք չունի դիտորդին դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա լինելուց:

26. Դիտորդը պարտավոր է պահպանել Պալատի կանոնադրության կանոնադրության և սույն կարգի պահանջները: